ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

5 դեկտեմբերի 2014 թվականի N 105-Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղեկատվության ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ ենթակետով և 13-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն 2014թ նոյեմբերի 27-ի Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի N 01/20/6378-14 հանձնարարականի, **կարգադրում եմ՝**

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու նշանակել մարզպետի խորհրդական Վոլոդյա Հովհաննիսյանին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լուսինե Մարությանին:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

2014թ. դեկտեմբերի 5
ք. Կապան